Բ. Ուսումնական մասն.

1. Կոճի Հայոց ուղղափառ դաւանութեան տարեկան 120
2. Հայոց լեզուի, Հայոց պատմութեան և Աշխարհագրութեան . 700
3. Ռուսաց լեզուի, Ընական պատմութեան և Ձեռագործութեան . 800
4. Հայոց լեզուի և վայելչագրութեան ի ստորին դասարանս . 180
5 Գծագրութեան 60
6. Վերակացուհի 120
7. Օգնական Նորա 60

Աշակերտուհիք.

Ձրիավարժ որդեգրուհիք Ղահրաման իշխանի Երկայնաբազուկ Արղութեանց 12
Թոշակառու որդեգրուհիք բարեպաշտօն անձանց քաղաքիս . . . 13
Թոշակառու աշակերտուհիք . . 71

Ծանօթ. Բաց ի վերոգրելոց գտանէին ի Դպրոցիս այլ ևս քսան և հինգ աշակերտուհիք, յորոց տասն և վեցն ըստ ինչ ինչ տնական պատճառանաց հեռացան ի Դպրոցէն, և ոմանք ի քաղաքէս. իսկ ինն աշակերտուհիք որպէս ուսումնաւարտք արձակեցան օրինաւոր վկայագրօք.

Առարկայք ուսման

1. Կրօնագիտութիւն
2. Հայոց լեզու
3. Ռուսաց լեզու
4. Թուաբանութիւն
5. Աշխարհագրութիւն
6. Հայոց պատմութիւն
7. Ընական պատմութիւն
8. Գեղագրութիւն
9. Երաժշտութիւն
10 Ձեռագործութիւն
11. Գծագրութիւն

Գ. Նիւթական մասն.

1 Մնացորդ ի 1874 ամէ ց1 Յունվարի 1875 ամի ընդ մայր գումարոյն ստացելոյ ի հաշիւ կտակաւանդութեան արժանայիշատակ Ղահրաման Իշխանի Երկայնաբազուկ Արղութեանց, որք են տոմսակք Արքունի դրամանոցի ամէնն . 26000
2. Նոյնպէս մնացորդ ուսումնարանապատկան արդեանց . . . 630 60

Մուտք յընթացս 1875 ամի.

3. Յարքունուստ ստացեալ տոկոսիք տոկոսաբեր տոմսակաց . . 1300
4 Արտաքին տոկոսիք . . . , 180
5 Թոշակագրամ՝ աշակերտուհեաց 1196
6. Վարձ ուսումնարանապատկան Նըւագարանի 20
7. Նուիրեալ դրամք 10
8. Կտակաւանդեալ ի Գերազնիւ Միրական Աղայէ Գորոյեանց . 1000

Ամէնն . . 3706 60

Որ լինի ընդ մնացորդացն 30336 60

Ա. Ընթացիկ ծախք.

1. Ռոճիկ ուսուցչաց և ծառայի . 1751 9
2. Ձեռագործութեան նիւթեղինաց և անձնական կամ ուսումնական պիտոյից որդեգրուհեաց ևլն. . 414 87
3. Տան վարձ վասն ուսումնարանի 220
4. Վերատեսչաց շինութեան ուսումնարանական կրպակաց . 1100
5 Վերադարձուցեալ թոշակագրամ՝ 6

Ամէնն . 3493 19

Զայս գումար ի բաց բարձեալ ի մեծ գումարացն մնայ ի պատրաստի 26343 47

Բաց ի վերոգրելոցն մնայ յապառիկս յանցեալ ամէ ստանալի ի թոշակագրամոց աշակերտուհեաց և որդեգրուհեաց ամէնն . . . 384

Ծանօթ. 1. Սկզբնաւորեալք ի հանգուցեալ Ղահրաման Իշխանէ Երկայնաբազուկ Արղութեանց շինութիւն ուսումնարանական դասատանց ի շրջապարսպի Սուրբ Նշան եկեղեցւոյ, որ մնացեալ էր ի պատճառս վաղահաս մահուան Նորա՝ դեռ հասանելոց է ի կատար.

2. Բերել տուեալ ի մայրաքաղաքէն Սանկտպետերբուրգայ ուսումնական պիտոյք գտանին ի խնամարկեալ և յամփոփ դրութեան.

3. Բաց ի վերոգրեալ ծախուց՝ Հոգաբարձութիւնս ի Յուլիս ամսոյ 1875 ամի պարտաւորեալ է մուրհակագրաւ 500 ր. տարեկան 60 րուբլի տոկոսեօք և յանձնեալ վերատեսչաց շինութեան ուսումնարանապատկան կրպակաց և այլ շինուածոց, և դեռ մնայ այդ պարտ անվճար.

ՀԱՆԳԻՍՏ ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱՅԻ ՂՓՉԱՂՈՒ

Մարտ ամսոյ 12ին վախճանեցաւ Ղփչախ գիւղի ծերունի Մինաս քահանայն Վահանեանց վաթսունամեայ հասակում և մարմինը արժանաւոր հանդիսիւ և յուղարկաւորութեամբ ամփոփուեցաւ ի գերեզման.

Հանգուցեալը բարի սրտի և հոգւոյ վիճակուած, և իւր քահանայական պաշտօնին հմուտ և պարտաւորութիւնը հանապազ քաջ ճանաչող և կատարող անձն էր. ուստի նորա մահը ինչպէս իւր գերդաստանին և ժողովրդոցը՝ նոյնպէս և այլ ծանօթներին, բարեկամներին և աշակերտներին բաւական վիշտ և տրտմութիւն պատճառեց։

Քառասուն տարւոյ չափ հաւատարմութեամբ ծառայել է նա Հառիճոյ վանքին, որ յիշեալ գիւղին կից է, յառաջագոյն որպէս միաբան, յետոյ զկնի ամուսնանալոյն՝ սարկաւագութեան և լուսարարութեան պաշտօնով. քսան և վեց տարի անխափան քահանայագործութիւն անելով հովուել է Ղփչաղ գիւղի ժողովուրդը. միանգամայն պարապել է կարելոյն չափ արդիւնաւոր ուսուցչութեամբ՝ թէ առտնին և թէ վանքական դպրոցում դաս տալով Հայկական լեզուի ուսումը, նոյնպէս և կրօնական և այլ գիտելիք։

Քանիցս անգամ Հոգևոր Ծայրագոյն Իշխանութեան կարգադրութեամբ մեր գաւառի գիւղական նորընծայ քահանաներից շատերը՝ յետ ձեռնադրութեան՝ Քառասունքներուն մէջ կացել են Հառիճոյ վանքում, և սոյն արժանայիշատակ քահանայի հմուտ առաջնորդութեամբ կրթուել են եկեղեցական արարողութեանց և կարգաւորութեանց մէջ, և պարապել այլ կարևոր գիտելիքների ուսմամբ։

Մ. Ա.

Ի 13 Մարտի 1876 ամի

ի Ղփչաղ։

Հետևեալ յայտարարութիւնը ուրախութեամբ հրատարակելով՝ կյուսամք ի ժամանակին տեսնել Փորձի յաջող հրատարակութիւնը, այժմէն միանգամայն բարեմաղթելով իրական արդիւնաւորութիւն Հայկական հարազատ ուղղութեամբ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

"ՓՈՐՁ"

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԻՍ

Առաջիկայ յուլիսի մէկից մեր խմբագրութեամբ կըհրատարակուի «ՓՈՐՁ» անունով ազգային եւ գրականական եռամսեայ հանդէս:

Արդեօք հարկաւո՞ր է ապացուցանել ամսագրերի կարեւորութիւնը Հայոց ներկայ կեանքի զարգացման համար: Ժողովրդի ընթերցասիրութեան պահանջը, նորա մտաւոր պիտոյքները օր ըստ օրէ աճում են: Հիւսիսափայլից եւ Կռունկից յետոյ մեր գրականութեան մէջ չերեւցան այլ եւս այնպիսի օրագրեր (*), որ կարողանային կրթիչ նիւթերով բաւականութիւն տալ այդ պիտոյքներին. իսկ մեր լրագրերը, որպէս շաբաթական թերթեր, պատկանում են օրական մամուլին, օրին. նորա անկարող են իւրեանց պարունակութեամբ կեանքի եւ մտքի հարցերին վճիռ տալ. նորա կարող են միայն հարցեր զարթեցնել, մտածելու առիթ տալ եւ այլն: Խնդիրը ուրեմն օրագրի կարեւորութիւնը պարզելը չէ, այլ թէ կարո՞ղ ենք արդեօք մենք մեր ձեռնարկած օրագրով ժողովրդի ընթերցասիրութեան քաղցը յագեցնել, նորա մտաւոր պահանջին բաւականութիւն տալ՝ թէ ոչ:

Մենք համոզուած ենք, որ այդ պահանջին կիսով չափ անգամ բաւականութիւն տալը մեր զօրութիւնից բարձր է. — դորա համար հարկաւոր են տաղանդ, մեծ միջոցներ եւ շատ փորձառութիւն. մենք կարող ենք կատարել միայն այն՝ ինչ որ կարող է կատարել եւ ամեն ոք, որ տէր է որոշ համոզմունքների եւ ունի հաստատ կամք: Ուրեմն մեր ձեռնարկած գործը կարող է միայն մի փորձ լինել ազգի լուսաւորութեան գործին ծառայելու:

Սորան կից նախագիծը ցոյց է տալիս, թէ ինչ նիւթեր կըպարունակէ իւր մէջ «փորձը»:

Մեր օրագրի ուղղութեան, նորա ոգու նկատմամբ, պարտք ենք համարում երկու խօսք ասել:

Ա. Ազգութեան հարցի նկատմամբ՝ ազգութիւնների ինքնուրոյն մտաւոր զարգացման, նոցա ինքնուրոյն բարոյական կեանք ունենալու իրաւունքը մենք ոչ միայն սրտով ենք ըմբռնում, այլ համարձակւում ենք կարծել, որ գիտութեան վերայ հիմնած համոզմունք ունինք: Եւ մեր ազգի պատմութեան ու ներկայ վիճակի մէջ մենք տեսնում ենք այն բոլոր երեւոյթները, որոնք Հայոց ազգի այդ ինքնուրոյնութեանն աւելի իրաւունք են տալիս՝ քան ուրիշ շատ ազգերի:

Բ. Մենք Հայաստանեայց, ազատութեան սկզբունքների վերայ հիմնած, Սուրբ Եկեղեցւոյ հարազատ որդի ենք: Այն փաստը, թէ այժմեան Հոգեւորականութիւնը չի համապատասխանում իւր կոչմանը, չի